# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
<<ՏՆՊՔ-ՄԱ- ԾՁԲ-19/07>>

Ք. Նոյեմբերյան

«08» «փետրվարի» 2019թ.

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Ղազարյանի, որը գործում է կազմակերպության հիման վրա (այսուհետև՝Պատվիրատու), մի կողմից, և <<Քաջիկ Անանյան>> ԱՁ-ն (այսուհետև՝Կատարող), մյուս կեղմից , կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը ստանձնում է կատարել հետևյալ ծառայությունը՝ լամինացված դեսպեի սալիկներից պատրասել հարմարեցված լուսամուտի լիստ, 2019 թվականի ջեռուցման սեզոնում <<Նոյեմբերյանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի դասասենյակներում և աշխատասենյակներում փայտե վառարանների խողովակները ,տեղադրելու համար, որը դրվում է ապակու փոխարեն:

1.1 Ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն):

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

*2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է նորմատիվներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշած որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 4.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողը պարտավոր է՝**

2.3.3 Ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.3.4 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**3. Պայմանագրի գինը**

3.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է <u>35000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ՝</u> Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու կամ կանխիկ ձևով դրամարկղից ստանալու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ծառայությունների ավարտից հետո 20 բանկային օրվա ընթացքում:

**4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

4.2 Չհամապատասխանող Ծառայություն մատուցելու դեպքում կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասին գնի նկատմամբ:

4.4 Սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

4.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

***4.7 Սույն պայմանագրի կատարման ժամկետ սահմանվում է 2019թ. փետրվարի 8-ից մինչև 2019թ. Փետրվարի 20-ը:***

***5 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)***

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

***6 Այլ պայմաններ***

6.1Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.4 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| <<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ | Ա/Ձ<< Քաջիկ Անանյան>> |
| Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Շիրազի 17 | Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ Նոյեմբերի 29-ի 17/2 |
| գործառնական վարչություն | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900898000357 | Հ/Հ 220159672074000 |
| ՀՎՀՀ 07400783 | ՀՎՀՀ 70411641 |
| ՏՆՕՐԵՆ __________ Ա. Ղազարյան | ՏՆՕՐԵՆ՝ __________ Ք. Անանյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |